



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Մ

ԳԱԼՈՒՍՏ ԿՅՈՒՄԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԵՂՎԱՐԴ ՈՒԹՈՒՅՑԱՆԻ ԲԱՆԱՌՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փարիզի համալսարանի դասախոս ճարտարապետ պր. Եղվարդ Ութուճյանը, որպես Գալուստ Կյուպենկյան հիմնարկության ներկայացուցիչ, 1957 թվականից ի վեր երիցս եղել է Ս. էջմիածնում և Մայր Հայրենիքում, ժանոթանալու Մայր Աթոռի շինարարական կյանքին և Հայաստանի հին և նոր ճարտարապետական հուշակապ հուշարձաններին:

Ճարտարապետ Եղվարդ Ութուճյանը առաջին անգամ եղել է Ս. էջմիածնում 1957 թվականի օգոստոսին, լոնդոնի համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի պրոֆ. Սըր Սիդնի Քեյնի հետ, որպես ներկայացուցիչներ Գալուստ Կյուպենկյան հիմնարկության:

1958 թվականի հոկտեմբերին ճարտարապետ Ութուճյանը նորից այցելել է Մայր Հայրենիք և Ս. էջմիածին, ներկա լինելու Վեհափառ Հայրապետի ծննդյան և զահակալության հոբելյանական հանդիսություններին: Այս տարի նորից հոկտեմբերին պր. Ութուճյանը եղավ Մայր Աթոռում և Հայրենիքում, իր հարգելի ֆրանսուհի տիկնոջ հետ:

Ճարտարապետ Եղվարդ Ութուճյանը Ս. էջմիածնից և Մայր Հայաստանից վերադարձել է միշտ վառ ու անմոռաց տպավորություններով, քաղցր հուշերով: Նա որպես ճշմարիտ հայրենասեր և ազնիվ հայ մարդ, և միաժամանակ որպես մասնագետ ճարտարապետ, իր տպավորությունները բովանդակալից բազմաթիվ բանախոսություններով և մոզական լապտերների միջոցով հա-

ղորդել է Ֆրանխայի, Բելգիայի, Իտալիայի, Պորտուգալիայի հայերին և հայ մշակույթը սիրող ու գնահատող օտար մշակութային, գրական շրջանակներին: Պր. Եղվարդ Ութուճյանը հատկապես հայ ճարտարապետությունը օտար շրջանակներին ծանոթացնում է «Académie d'architecture»-ի տեղեկագրում, որի և խմբագիրն է:

Պր. Եղվարդ Ութուճյանը 1957 թվականից ի վեր ամիսի քան 40 գիտական լուրջ բանախոսություններ է կարդացել «Հայաստանի հին և արդի ճարտարապետությունը» թեմայի շուրջ լոնդոնում, Փարիզում, Բրյուսելում, Միլանոյում, Լիսաբոնում և այլուր:

1959 թվականի մարտի 9-ին ճարտարապետ Եղվարդ Ութուճյանը կարդացել է մի ընդարձակ և բովանդակալից դասախոսություն Փարիզում հայ ճարտարապետության մասին, որի ամփոփումը՝ Ս. Հոփսիմեի տաճարի (է դար), Հաղարծինի վանքի (ԺԱ դար), Օձունի եկեղեցու (Ե դար), Ս. Գայանեի վանքի (Ը դար), Սևանի մատուռն (Ժ դար) նկարներով՝ տրվել է «Académie d'architecture» -ի 1959 թվականի առաջին եռամսյակի տեղեկագրում, որից քաղվածաբար տալիս ենք հետևյալը.

«Արևմուտքը հարաբերաբար վատ է ճանաչում հայ ժողովրդի պատմությունը, որ շարունակվում է Ք. Ա. երկրորդ. հազարամյակից մինչև մեր օրերը:

Շինարար այս ժողովուրդը նշանակալի մեծ նպաստ է բերել համաշխարհային քաղաքակրթությանը, մանավանդ իր ճարտար-

րապետությամբ, Արևելքի և Արևմուտքի բրիտանական ճարտարապետության ըսկըզբնավորության:

Հայկական քաղաքակրթության ծագումը կորչում է ժամանակների գիշերվա մեջ և շփոթվում հիթիթների, հուրի-միդանի և ուրարտական ժողովուրդների մշակույթի հետ:

Հայաստանը եղավ անցուղին մեծ արշավանքների և բազմիցս հարձակումների կրեց դրանք ժողովուրդների կողմից: Ոչ Ասուրը, ոչ Բաբելը, ոչ Ալեքսանդր Մեծը, ոչ հռոմայեցիք, ոչ Բյուզանդիան, ոչ Սասանյանները, ոչ պարթևները, ոչ արաբները, ոչ սելջուկյան թուրքերը չկարողացան լիովին ընկճել Հայկական ամրոցը և անկախ լեռնականները այս ժողովրդին:

Հայերը յուրահատուկ մի ճարտարապետություն են ստեղծել: Հայաստանում առատ են ամենատարբեր քարերը, սկսած բազալտներից և բազմագույն գրանիտներից մինչև հրաբխային մի տուֆ՝ հեշտ կոփվող և օդից կարծրացող, ինչ որ նրան ապահովում է հազարամյա դիմացկունություն: (Այս տուֆի վարդագույն մի տարբերակը կոչվում է Արթիկ, իր հանքավայրի անունով, և հիշեցնում է Պոլատուի մեր Արթիկը (կրային):

Քսենոֆոնից հետո, չպետք է մոռանալ, որ Լեոնարդո դա Վինչին փաստագրական մի ուղեորություն կատարեց Հայաստանում, և նա կատարելապես ճանաչում էր հայկական հուշարձանները: Մեծ քանդակագործ Բուդելլը չէ՞ր ասում, որ հայկական ճարտարապետությունը այն ճարտարապետությունն էր, որ ամենից ավելի հուզում էր պատճառում իրեն:

Բազմաթիվ են արևմուտքի այն հեղինակները, որոնք ուսումնասիրել են հայկական ճարտարապետությունը:

Շառլը Տիֆսին և Դյուբուա դը Մոնպերյոն արևմտյան աշխարհի առաջ երևան հանեցին հայկական ճարտարապետության կարևորությունը Արևմտյան դպրոցի կազմակերպման գործում՝ իրենց ուղեգրության հրատարակությամբ և այցելած հուշարձանների պատկերազարդ նկարազրույթով:

Օգյուստ Շուազին անգիտանում էր հայկական հուշարձանների թվագրությունը և մտածում, որ նրանք Ժ դարից հնագույն չեն: Չնայած սրան, նա առաջիններից մեկը եղավ առարկայական վերլուծումը կատարող Հայաստանի հուշարձանների, որոնք համարվում էին որպես մի ճյուղը բյուզանդական արվեստի: Նա նկարագրեց հայկական աղղեցություն տարածման ուղիները ուսական, Սկանդինավյան երկրների և Իսլանդիայի խողովակներով:

Թոմս Թոմամսյանը կատարեց Անիի և Զվարթնոցի նշանակալի ուսումնասիրություններն ու պեղումները, ըստ արևմտյան մեթոդների:

Սուրգիզովսկին իր բազմաթիվ հատորներով երևան հանեց հայկական դիվալոր հուշարձանները: Ըստ նրա, քառակուսու վրա զմբեթը Իրանից է անցել Հայաստան, որտեղ նա կատարելագործվել է Դ դարում: Հայ վարպետները հետքեր են թողել Բյուզանդիայում և արևմտյան աշխարհում—Թեոդորիկոս Խավենացու դամբարանը, Սան-Լորենցոն, Սան-Մինիատոն, Ժերմինյի-դե-Պրեն, Հոմեր Ս. Պետրոսը, Էքսի Պալատինյան մատուղը և այլն:

Սուրգիզովսկու աղղեցությունը մեծ եղավ այս կալվածում պրպտողների վրա: Չնայած մի քանի չափազանցությունների, նրա գործը այս նյութի մեջ մնում է էական:

Գյուլը, Ռամսեյը, Բելլը, Ռոտար նկարագրում են հայկական ճարտարապետությունը՝ տարբեր մեկնաբանություններ տալով նրա աղղեցության և սկզբնավորության մասին:

Օրիգո Ֆր. Հանրին երևան է բերում հայկական հետքեր Իսլանդիայում:

Դաբրիել Միլեն և Շառլ Դիելը, հունական դպրոցի աղղեցությունը գովաբանելուց հետո, ճանաչեցին հայկական դպրոցի ինքնուրույնությունը:

Բալտուսաիդիսը, հոմեական քանդակների վերլուծումով, բարձրանում է դեպի սկզբնավորությունը: Նա ապացուցում է սումերական արվեստի ուղղակի աղղեցությունը, ավելի ուշ, հայկական արվեստի միջոցով: Համեմատություն հոմեական ճարտարապետության հետ, որին նախորդում է: Աղղակցություն գոթականի, սկիզբ գոթական աղղի—Կորդուի Միհրապը, Պիթիվինեն, Հաղրատը:

Դալտոն, Գրաբար—Հոմ—Արևելք փոխադարձ աղղեցություն:

Խաչատրյան—օրյեկտիվ վերլուծում տարբեր մեկնաբանությունների և դպրոցների:

Սիրարփի Տեր-Նեսեսյան— ուսուցում Քեմբրիջի համալսարանում (ԱՄՆ):

Հին են և բազմապիսի Հայաստանի և Ֆրանսիայի կապերը: Նույնիսկ խաչակրություններից առաջ, հայ հոգեբանները հաստատվել էին Ֆրանսիայում: Պիթիվինի կալիկոպոսը՝ Ս. Գրիգոր Պիթիվինցին հայ էր (1001 թ.):

Նրանից առաջ, բայց միևնույն շրջանում, Ժերմինյի-դե-Պրենի եկեղեցին (806—811) թ. թ.) կառուցվեց էջմիածնի Կաթողիկեի (Դ դար) օրինակով, վերակառուցված 618-ին ըստ Հանրի Ֆոսիլոնի: Նրա կառուցումը, արդարև, մատահվեց էքսի Պալատինյան մատուղի:

ռան (806 թ.) հեղինակին, ճարտարապետ Օդո դը Մեսիեին (որ ծագումով հայ էր):
Ֆրանսիայի բազմաթիվ հուշարձաններ, մանավանդ ռոմանական շրջանից, կրում են հայկական բաղեցույթյան նշանները: Ամբողջական մի մենագրություն և բաղդատական տախտակներ կազմվելու վրա են:

Հիշենք Տարասկոնի Ս. Մարի, Պրովանսի
և Լանգդոկի, Գարդի Ս. Գիլի եկեղեցիները:

Առլի Ս. Տրոփիմի դարբասը (վերանորոգությունը 1221 թ. հայ վարպետների կողմից): Մակկերը թվում է Ս. Նեկտար-ը-Հոլի, Պորտ դը Կլերմոնտի Տիրամոր տաճարը, Կահորի կաթողիկեն, Պիթիվիեի՝ Հայաստանի Ս. Գրիգորը: Ի՞նչ ասել Բուրժուա կաթողիկեի հայերեն որմագրերի մասին: Այս ընդարձակ կալվածք արժանի է առավել մեթոդական մի հետազոտության, որը կարող է երևան բերել խիստ սերտ կապեր Հայաստանի և Ֆրանսիայի միջև»:

Այս բանախոսով յունից հետո պր. Ութու-
ճյանը ցույց է տալիս հինավուրց Հայաստա-
նի վանքերի, եկեղեցիների, մատուռների և
դարավոր կամուրջների տպավորիչ գունավոր
տեսարանները, ընկերացած մի շարք տիպա-
կան հատակագծերով: Դրանք են մասնավո-
րապես էջմիածնի Կաթողիկոսն (Դ—է դա-
րեր), Շողակաթի, Աշտարակի (ԺԴ դար),
Մուշնու (ԺԴ և ԺԶ դարեր), Օհաննավանքի
(ԺԳ դար), Կեշառուքի (ԺԱ, ԺԲ և ԺԳ դարեր)
եկեղեցիները, Հաղարծինի (ԺԱ դար), Օձու-
նի (Ծ դար), Սանահինի (ԺԱ դար) վանքերը,
Քրիլիսիի հայկական եկեղեցիները և այլն,
իշխան նաև Սևանի լճի նոր պեղումների լու-
սանկարները:

Հայկական ճարտարապետության պատմության այս շատ արագ, բայց բովանդակալից հաղորդագրությունը ջերմ ծափահարություններով է ընդունվում բազմաթիվ ունկնդիրների կողմից:

ԱՎԱՍՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Մալիսի 3-ը Ավստրալիայի և Նոր-Զելանդիայի հայ համայնքի համար ուրախութիւնն օր էր։ Այդ օրը տեղի ունեցավ նորահասույց երիցատան պաշտոնական բացումը։ Երիցատունը անվանվեց Զվարթնոց։ Երիցատան բացմանը եկել էին բազմաթիվ հայեր Սիդնեյից, Մելբուռնից և Նոր-Զելանդիայից։ Ներկա էին նաև ազգային բարերարներ տեղ և տրեղին Ակինյանները, որոնք իրենց օժանդակութունն էին բերել երիցատան կառուցման գործում։ Պր. Ակինյանը 1958 թվականի դեկտեմբերի 1 թվակիր սրբատառ Կոնդակով Անհափառ Հայրապետի կողմից պարգևատրվել է Ս. Գրիգոր Լուսավորչի ու կարգի ադամանդակուտ շքանշանով, ի վարձ իր ազգօգուտ գործունեութան։

Քաղաքում ժամանակի առաջնորդական փոխանորդ և տեղի հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Արամյանի քահանա Միրզոյանին իր գեղեցիկ ձառում ասաց. «Ավստրալիո և Նոր-Զիլանդայի մեր պատվական ժողովուրդի զավակները շատ կարճ ժամանակվան մը ընթացքին իրենց սխրալի գործունեությամբ ապացուցեցին, որ իսկապես շինարար և ստեղծագործ հայ ժողովուրդի արժանավոր զավակներն են իրենք: Քանի կա և գոյություն ունի Հայաստնայաց Առաքելական Ս. Եկեղեցի և Զվարթնոց տունը այս գեղեցիկ քաղաքին մեջ, ուրախ և զվարթ պիտի զգանք մեզ, քանզի հոգևոր ու մշակութային այս զույգ հաստատությունները պիտի ծառայեն իրր միություն ու հոգեկան ապրումներու իսկական ժամադրանքար մը ու իրենց անունները իսպառ հավերժացնող փառավոր հուշարձաններ ու ազգային-կոթողներ»:

կարդացվեցին թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանի օրվա առթիվ ուղարկած օրհնությամբ գիրք, ինչպես նաև մի շարք շնորհավորական գրույթներ՝ ստացված զանազան վայրերից:

Սիդնեյում մեծ հանդիսավորությամբ կատարվեցին զատակահան սրբազան արարողությունները, գլխավորությամբ հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Արամայիս քահանա Միրզոյանի։ Սուրբ պատարագի ընթացքում ընթերցվեցին Վհահափառ Հայրապետի սրբատառ կոնդակներն ու օրհնության գրեքը՝ ուղեշված ազգային բարերարների և երախտաշատ գործիչների։ «Դարավոր ու հեռավոր Սեյմիածնի անդնն ու հմայքը և Վհահափառ Հայրապետի սրբատառ կոնդակները և օրհնության գրեքը անգամ մը ևս ստեղծեցին քաղցր մթնոլորտ մը, խորհրդավոր ու նվիրակա՛ն պահ մը մեր ժողովուրդին համար, այս հուլիսընկալ ափանց վրա», — գրում է Սիդնեյի եկեղեցու պաշտոնական ամսագիր «Լույս»-ը։

Նույն օրը, պատարագից հետո տեղի ունեցած ճաշկերույթի ընթացքում, Տ. Արամյան քահանան պաշտոնապես տեր և տիկին Ակինյաններին հանձնում է Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը: Իր շնորհակալական խոսքում պր. Ակինյանը ցանկություն է հայտնում, որ «երբ հնարավոր ըլլա, կփափագի հանդերձ ընտանյոք Ս. Էջմիածին պեյքիվը, համրուրելու համար Վեհափառ Հայրապետի Ս. և օծյալ Աջը և իր ուխտը կատարելու Իջման Ս. Սեղանի-արոցը»:

ԿԱԼԿԱՔԱՅԻ ՆՍՏԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻՑ ՄԻՈՒՅՅԱՆ ՆԱԿԵՍ

Հնդկաստանի Կալկաթա քաղաքում սրանից մոտավորապես 50 տարի առաջ կազմակերպվել է Հայկազյան գեղարվեստից միությունը, նպաստելու համար հնդկահայ կրթական և բարեգործական ձեռնարկներին, օժանդակելու Սփյուռքի հայաշատ կենտրոններից Կալկաթա քաղաքում հայ արվեստագետների գեղարվեստական ելույթներին:

Միության գործունեությունը վերջին տարիներին նոր թափ ստացավ, մասնավոր 1954 թվականից, երբ ներկայացվեց Շիրվանդադեի «Պատվի համար»-ը, «Նյու Էմպայր թեատր» թատրոնում: Սակայն միության կանոնավոր գործունեությունը խափանվում էր սեփական սրահ և բեմ չունենալու պատճառով: Այս դժվարությունը մեծ մասամբ հաղթահարվեց, երբ կառուցվեց Հայկական կոլեջի սրահը, որի ծախսերը հոգացվեցին «Պատվի համար»-ի ներկայացումից գոյացած եկամուտներով և պր. Պ. Ալեքսի կարևոր նվիրատվությամբ:

Դրանից հետո հաճախակի հայկական հավաքություններ և համերգներ տեղի են ունեցել այդ սրահում: Հիշատակության արժանի են նշանավոր հայ արվեստագետների ելույթները այստեղ, ինչպես Մոսկվայի Մեծ թատրոնի մենակատար Պավել Լիսիցյանի, երիտասարդ տաղանդավոր կոմպոզիտոր Առնո Բարաջանյանի և դաշնակահար Բաֆֆի Պետրոսյանի և ուրիշների ելույթները:

Միության նպատակն է վառ պահել Հնդկաստանի հայ սերնդի սրտում հայ լեզվի, երաժշտության, մշակույթի և պատմության սերը: Միությունն իր առաջ պարտք է դրել թարգմանել և ներկայացնել հայ մշակույթի արժեքները հնդկի բարեկամներին և մյուս համալսարաններին, որոնք գտնվում են հատկապես Կալկաթա մեծ քաղաքում և ընդհանրապես ամբողջ Հնդկաստանում:

Հայկազյան գեղարվեստից միությունը ունի իր վարչությունը, որի նախագահն է պր. Հայկ Մ. Նազարյանը, փոխ նախագահն է պր. Պետրոս Բ. Ալեքսի, պատվակալ

քարտուղարներն են պր. պր. Կարո Ա. Մարտիրոս և Մ. Դ. Հարությունը, իսկ անդամները՝ տեր և տիկին Կյուլյանները և տիկ. Սոֆի Մարգարյանը:

Հայկազյան գեղարվեստից միությունը, Հնդկաստանի և Մայրադուր Արևելքի առաջնորդ և Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանի հովանավորությամբ, այս տարվա սեպտեմբերի 20-ին կազմակերպել է ճոխ հայտագրով մի հանդես, որտեղ ելույթ են ունեցել Հայկազյան գեղարվեստից միության երգեցիկ խումբը՝ ղեկավարությամբ պր. Ասատուր Կյուլյանի և մասնակցությամբ մեներգիչ պր. Արգար Մինասյանի, դաշնակահարուհիներ Վիվիեն Կյուլյանի, Ալիս և Մարի Դավիթյանի, որոնք կատարել են Թաթու Ալիթյանի, Սպենդիարյանի, Արամ Խաչատրյանի և իրենց սեփական ստեղծագործություններից կտորներ: Հայտագրին մաս են կազմել նաև ներկայացումներ, ինչպես՝ Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ»-ը, հնդկական ներկայացումներ և արտասանություններ: Պր. Պետրոս Ալեքսի հուշումով արտասանել է անմահ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի «Մարտ» պոեմը:

Գեղարվեստական այս հանդիսությունը չէր միայն հանդիսություն, այլ հանդիսություն էր ընդունվել հայ, հնդկ և օտարազգի բազմաթիվ հանդիսականների կողմից: Հանդիսության ներկա են եղել նաև զանազան երկրների տասից ավելի հյուպատոսներ: Տեղական թերթերը մեծ գովեստով են խոսել այս հանդեսի մասին:

Միությունը մտադրել է մոտիկ ապագային մեծ հանդիսությամբ տոնել Կոմիտաս վարդապետի ծննդյան 90-րդ տարեդարձը, դասախոսություններ տալ անգլերեն լեզվով հայ ժողովրդի ծագման և հայ մշակույթի մասին, կազմակերպել երաժշտական երեկոներ, թատերական ներկայացումներ:

Անկեղծ քաջալերանքի ու գովասանքի արժանի է Կալկաթայի Հայկազյան գեղարվեստից միության գործունեությունը:

ԵՐԴՐԱՆԱԾ ԿՅԱՆՔ

Մայիս ամսին եպիսկոպոսի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանը այցելեց Եթովպիա, մասնակցելու համար Եթովպիայի հայոց զաղութային մարմնի ընտրության:

Գերաշնորհ Տ. Մամբրե արքեպիսկոպոսը, ընկերակցությամբ հոգեշնորհ Տ. Զավեն վարդապետի և զաղութային ու ուսումնական

խորհրդի անդամների, մայիսի 16-ին տվեց իր պաշտոնական այցելությունը ազգային Գեորգով վարժարանին: Սրբազան հայրը վարժարանի աշակերտներին իր տված պատգամի մեջ շեշտեց հայցի դաստիարակության անհրաժեշտությունը և «հիշեց Հայաստանի դպրոցներն ու ուսումնական և մշակութային վերելքը, եղրակացնելով, որ

հայ ժողովուրդը մնացած է և գոյատևած իր մշակութիւնով և հոգեկան արժեքներու հանդեպ իր նախաձեռնութեամբ» («Փյունիկ», 1959 թ., № 6):

Մայիսի 22-ին, ընկերակցութեամբ հոգե- շնորհ Տ. Զավեն վարդապետի, սրբազան հայրը շուրս օրով եղավ նաև Դիրե-Դավա- յում՝ հոգեպետ մխիթարելու համար տեղա- ընակ մեր հայրենակիցներին:

Մայիսի 31-ին, սրբազան հոր նախագա- հութեամբ, տեղի ունեցավ Եթովպիայի հայ դաղութի ժողովի 7 անդամներ ընտրութիւն- ներ:

Հունիսի 4-ին Եթովպիայի կայսր Հայլե Սելասիե Ա-ը ընդունեց գերաշնորհ Տ. Մամ- բեր արքեպիսկոպոս Սիրունյանին և իր հետևորդներին: Ընդունելութիւնը եղավ շատ սիրալիր: Ընդունելութեան վերջում սրբազան հայրը «Պահպանիչ»-ով և «Հայր մեր»-ով օրհնեց Վեհապետին:

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿՑԱՆՔԸ ՄԻԼԱՆՈՅՈՒՄ*

Վեհափա՛ն Տեր.

Ձեր հոգեւոր որդիները, Սփյուռքի հայ ե- կեղեցականներս, կաղոթենք Ձեզ հետ միա- սին, որ Աստուած շուտով փութացնե խաղա- ղութիւնը աշխարհին, որպեսզի ամեն ինչ ընթանա Աստուծո սուրբ կամքին համաձայն, որպեսզի մեր Եկեղեցին ալ գտնե իր վերջ- նական անդորրութիւնը, որպեսզի Մայր Ա- թոռ Սուրբ Էջմիածինն ալ հայ Սփյուռքի անդորրութեամբ իր հոգեւոր և մշակութային հարստութեան մեջ բազմապատկի, որ- պեսզի Ձերդ Ս. Օծութեան բարի աչքերուն և քաղցր հոգիին մեջ աստվածային սիրո ժպի- տը մնա մշտական ու մնա անաղարտ:

Մունկի՛ Վեհափառութեանդ Գահին ու մեծ սրտին մոտ՝ Օծութեանդ օրհնութիւնը կհայ- ցեմ: Աստուած Մայր Աթոռը անսասան պա- հե:

Կփափագինք Վեհիդ հաղորդել Միլանի հա- յոյ ներքին կյանքին կարգ մը իրողութիւն- ներ, գաղութիս պատվարժան հոգաբարձու- թեան գիտութեան համաձայն:

Նախ փառք Տիրոջ, որ եկեղեցւոյս դպրադ դասը կազմակերպվեցավ և երգհօնի վրա՝ նվերը պր. Ե. Հյուսիսյանի՝ Եկմայան պա- տարագը կունկնդրե ժողովուրդը հոգեւոր մխի-

Հունիսի 8-ին, գերաշնորհ Տ. Մամբեր արքեպիսկոպոսը, ընկերակցութեամբ հոգե- շնորհ Տ. Զավեն վարդապետի, այցելեց Ե- թովպական քույր եկեղեցու արքեպիսկոպոս արուճա Բասիլիոսին, Եթովպական Պատ- ռիարքարանում: Սրբազան հորը դիմավորե- ցին վեց եթովպացի եպիսկոպոսներ՝ Տ. Սեւ- րոս, Տ. Ղուկաս, Տ. Հակոբոս, Տ. Գարրիել, Տ. Մարկոս և Տ. Տիմոթէոս և նրան առաջ- նորդեցին այն դահլիճը, որտեղ գտնվում էր Բասիլիոս արքեպիսկոպոսը: Եթովպական եկեղեցու պետը և Մամբեր սրբազանը մտեր- մական զրույցի ընթացքում մտքեր փոխա- նակեցին քույր եկեղեցիներին հետաքրքրող կրոնական հարցերի և եկեղեցական կյանքի շուրջ:

Գերաշնորհ Տ. Մամբեր արքեպիսկոպոս Սիրունյանը հունիսի 23-ին վերադարձավ Կահիրե:

Թարութեամբ: Կազմակերպվելու վրա է նաև հայ լեզվի դասընթացը և մեծերուն համար «Հայ լսարան» ծրագիրը: Կկազմակերպենք նաև դասախոսութեանց շարք մը:

Հոկտեմբեր 25-ին, կիրակի երեկոյան ժա- մը 9.30-ին, հարգանքի երեկույթ մը տեղի ունեցավ Հայ տունին մեջ, ի պատիվ հոգա- բարձրութեանս ատենապետ տիար Երվանդ Հյուսիսյանի: Երեկույթը կազմակերպած էր հոգաբարձութիւնը: Ժողովուրդը ծափերով ընդունեց օրվան հարգելի անձը՝ տիար Ե. Հյուսիսյան, որ իր կուրծքին վրա կկրե Լու- սավորչի շքանշանը: Հովիվը կնախագահեր հանդեսին: Բացման խոսքը ըրավ հոգաբար- ձութեան ատենապետ տիար Արիս Շալճյան, ապա հրավիրեց օրվան բուն խոսողը՝ հո- գաբարձութեան փոխ ատենապետ տիար Ստեփան Սրապյան, որ իր շատ գեղե- ցիկ ճառին մեջ ըսավ.

«Անձը, զոր այսօր կպատվենք, ծնած է Թորքատ, համեստ և պատվական ընտանիքի մը. օծված հայրդով կենսունակութեան ու պիտի, աշխատասեր և հառաջդիմութեան կայծը իր հոգւոյն մեջ, դեռ իր դեռատի հասակին, ուսին կնեռն պանդխտութեան մասաղը, նետվելով կյանքի անստույգ և մանվածապատ բովիղներուն մեջ, դարձե- լու համար իրեն տնտեսապես անկախ և տանելի վիճակ մը. և այսպես միայնակ և հաջողութեան հույսը ուղեցուց ունենա- լով, կնեռնի կյանքի հնոցին մեջ. Ափրիկէ, Սամսոն, Եմրոպա և այլուր կըլլան հետզհե- տե իր կյանքի վերելքին հանգրվանները:

* Գոհունակութեամբ և քաղվածաբար հրատարակու- մ ենք Վեհափառ Հայրապետին ուղղված Միլանոյի նոր- ընտիր հոգեւոր հովիվ հոգեշնորհ Տ. Իսահակ վարդա- պետ Ղազարյանի 1959 թվականի նոյեմբեր 14 թվա- կիր պաշտոնական նամակը, որտեղ Միլանոյի հայ ազգային կյանքի մասին կան մի շարք տեղեկութիւն- ներ:

Ան բնավ շուտահաստեցավ դժվարութիւններու առջև. հեցած իր կամքի ուժին, զոհողութեամբ կոփեց իր կամքը և այսպէս, համբերութեամբ և կորովով հաղթահարեց կյանքի բոլոր խոշորագոյնները: Օժտված առնական մարդու անաղարտ հավատքով, ան միշտ տերն եղած է իր իղձերուն և ճակատագրին, և այսպէս հեհնէ և օրը օրին պայքարելով, հաջողած է կերտել իրեն համար օրինակելի և փայլուն դիրք մը:

Ըլլա մեր համայնքին մեջ կամ Սփյուռքի, ան վեհանձնորդին իր փորձառութեան իմաստութեամբ ու նյութական միջոցները լայնորեն տրամադրեց ամեն պատեհ առիթով, շփման մեջ մտնելով բոլոր խավերուն հետ, զոհելով իր գործի ժամերը ազգագուտ գործի մը հաջողութեանը համար: Նյութական օգնութիւններու քանակը չէ որ նկատի առած ենք շափանիշ մը դնելու իր ազգասիրական զգացումներուն, որովհետեւ մեր ազգային իրականութեան մեջ անհամար են վսեմ և տիտան բարերարներու օրինակները, որոնք հոգեկան լուսավոր ներշնչումներով փոխանցած են դարերու ընթացքին իրենց բարոյական տուրքը ցեղին ազնվացմանը համար:

Պր. Հյուսիսայանի ազգասիրութեամբ պարզ և ինքնաբերական ապրումներն: Կիսանդամովի և կիսանդամառն շրջապատը: Աշխարհիս ո՛ր անկյունն ալ որ գտնվի, իրեն հետաքրքրողը հայ համայնքը և հայ միութեաններն են:

Ան կուսակցութեաններու, պայքարի և մաքառումներու մարդը չէ: Իր աշխարհայացքը բարոյութեաններ շունչի իր էութեամբը նահապետական է ու անհիշալար: Հըստակ են իր տեսութեանները: Անխախտ իր համոզումներու մեջ, իր նպատակը միշտ նույնն է՝ համախմբել իր շուրջը պիտանի տարրեր և կազմակերպել՝ արժեքավորելու և հավերժացնելու համար մեր սոհմային արժանիքները:

Տարիներն ի վեր ան փարած է Բարեգործականին: Իր ճիգերը շինայեց մասնաճյուղերու կազմակերպութեան համար: Իբրև հսկիչ, շատ մը շոշափելի և դժվարին գործեր գլուխ հանեց Միջին Արևելքի մեջ ու մեծապէս գնահատելեցավ կազմակերպութեան վերին մարմիններին:

Եթե ասկէ երեք տարիներ առաջ գաղութս պատմական վայելքն ունեցավ իր մեջ հյուսիսիւրեւոյ Նորին Ս. Օծութեան Ս. Ս. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը, այդ պարտինք պր. Երվանդ Հյուսիսայանի անխնայ ճիգերուն:

Մեր փոքր համայնքը արժանավորապէս պատմեց հայուն հավատքին սուրբ խորհուր-

դը եղող և Լուսավորչի անմահ Աթոռին պահպան Նորին Ս. Օծութեան Վազգեն Ա Հայրապետը և այս առիթով իր ընտրյալ զավակները երեք եկեղեցիներ նվիրեցին ի փառս անմահ Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցւոյ, և որոնք արժանացան Հայ Եկեղեցւոյ ասպետի փառավոր շքանշանին: Ահա այս ընտրյալներն մինն է մեր պատմական ատենապետը պր. Հյուսիսայան, որուն կմադրեց երկար ու երջանիկ տարիներ իր ընտանեկան ջերմ հարկին տակ:

Ապա խոսք տուալ նաև Իտալահայ գաղութային վարչութեան ատենապետ դոկտ. Երվանդ Արզումանյան: Հետո բեմ հրավիրեցավ հայտնի և սիրված երգչուհի տիկին Անդամի Սիմոնյան-Պետրոսյանը, որ երգեց Կոմիտասի «Հայաստան»-ը, «Սև աշեր»-ը, Ալվազյանի «Հայաստան»-ը, Մեսոմենցի «Միծառնիկ»-ը, Ալեմշահի «Ժամ երգը» և Ռոսսինի «Սեմիրամիդէն» օպերային «Բելուաշո Լուսինգեո» կտորը: Դաշնակի վրա կընկերանար հայտնի սինֆոնիկ դիրիժոր Օրֆեր Ռոսսի: Ապա խոսեցավ հոգեւոր հովիւր, որուն բուն խոսքն էր. «Երանի» անոնց, որոնք հարազատ նմանութեամբ ունին իրենց մորը: Հովիւր այս առթիւ ցույց տվաւ, թե Ե. Հյուսիսայան եթէ արժեք և արժանիք մը ունի, այդ պարտի ա՛ն իրողութեան, որ ան հարազատ նմանութեամբ ունի ամենուս Մայրը եղող մեր հովիտեանական Մայր Հայրենիքին և Մայր Եկեղեցիին: Վերջին խոսքը ըրավ տիար Ե. Հյուսիսայան: Հուզված շեշտով իր շնորհակալութեամբ հայտնեց բոլորին և ըրավ հետևյալ հատկանշական հայտարարութեանը, թե յոթանասուն երկար տարիներու իր փորձառութեամբ հասած է այն իմաստուն եզրակացութեան, որ ամենայն ինչ ընդունայն է ու կյանքը պարապ բան մըն է. ճիշտ այդ պարապութեամբ լեցնելու համար ինք նյութապէս և բարոյապէս օժանդակած է Ազգին և Եկեղեցիին, և թե պատրաստ է շարունակելու իր գործը այնքան ատեն, որքան ատեն որ Աստված ուզի: Իր այս հայտարարութեամբ բուն ծափահարութեամբ ողջունվեցավ ներկաներուն կողմն: Նախագահ հովիւրն պահպանելով, հանուն հոգաբարձութեան և գաղութին, պր. Ե. Հյուսիսայանին հանձնվեցավ շատ գեղեցիկ արժաթ ոսկեզօծ սկավառակ մը, որուն վրա փորագրված էին Հայաստանի մեր նշանավոր վանքերը և պնակին մեջտեղը Միլանի Քառասուն Մանկունք եկեղեցին: Երբ համարձակութեամբ ունեցաւ հանուն Ձերդ Ս. Օծութեան ալ Ձեր հայրական օրհնութեանն ու Հայրապետական բարի իղձերը հայտնելու թե՛ պր. Ե. Հյուսիսայանին և թե՛ Միլանի մեր գաղութին, բոլորը հոտնկայս ըն-

դունեցին Ձեր օրհնությունը և ծափերու մեջ լսելի էին «Ապրիլ» մեր Վեհափառը» ձայնները, որոնք կուգային ժողովուրդին սրտեն։ Ընդհանուր վերջ հոգաբարձության բոլոր անձովքներ վերջ հոգաբարձության պր. Ե. Հյուսիս-դամները ողջագուրվեցան պր. Ե. Հյուսիս-

յանին հետ։ Ապա կատարվեցավ հյուրասիրությունը։ Ուրախ և մխիթարական մթնոլորտի մը մեջ հանդիսությունը վերջացավ գիշերուան ուշ պահուն։

ՀՈԳԵՆՈՐԶ Տ. ՎԱԶԳԵՆ ԱՐԵՂԱ ՔԵՇԻՇՅԱՆ

Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնությունը, նույնմբերի 8-ին, Կահիրեի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում, Եգիպտոսի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Մամբրիս արքեպիսկոպոս Միրունյանը, ի ներկայությամբ խոսեցրեց բազմության, ազգային-եկեղեցական իշխանությունների, Կահիրեի բրիտանական եկեղեցիների ներկայացուցիչների և պետական պաշտոնատարների, կուսակրոն քահանա է ձեռնադրել Մայր Աթոռի միաբան բարեշնորհ տիրացու Նուպար Քեշիշյանին։ Նորընծան, ի հարգանս և ի մեծարանս Վեհափառ Հայրապետի, վերանվանվել է Տ. Վազգեն արեղա։

Վեհափառ Հայրապետի հրամանով և Կահիրեի հայոց առաջնորդարանի առաջարկությամբ, հոգեշնորհ Տ. Վազգեն արեղան, իր քառասունը անցկացնելուց հետո, կմեկնի Եթովպիա՝ հայ գաղութին որպես հոգևոր հովիվ։

Մայր Աթոռի երիտասարդ միաբան և Եթովպիայի հայոց նորընտիր հոգևոր հովիվ Տ. Վազգեն արեղային շնորհավորում ենք և ցանկանում լավագույն հաջողություններ իր պաշտոնավարության մեջ, ի մխիթարություն Վեհափառ Հայրապետի և հուրախություն Մայր Աթոռի։

ՄԱՀ ՊՐՈՖ.-ԴՈՎՏ. Հ. ՅԱԿՈԲՈՎԻՉԻ

Հոկտեմբերի 29-ին, Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում, խոր ծերության մեջ մահացավ հայազգի բժշկապետ և գիտնական պրոֆ.-դոկտ. Հ. Յակոբովիչը։

Հանգուցյալի մարմինը Բուխարեստի Բժշկական ինստիտուտի դահլիճում զետեղվեց երկու օր։

Թաղումը կատարվեց ազգային պատիվներով, Ռումինիայի Առողջապահության մինիստրության և Գիտությունների ակադեմիայի կողմից։

Մեծանուն պրոֆեսորը ծնվել է 1879 թվականին, Ռումինիայի հայաշատ Բոտոշան քաղաքում, չքավոր ընտանիքի հարկի տակ։ Նա իրրե թողնակառու ուսանող տեղի հայոց եկեղեցու, ավարտելով Բժշկական համալսարանը 1905 թվականին, 1919 թվականին նշա-

նակվում է վիրաբուժության ամբիոնի պրոֆեսոր։ Պրոֆ. Յակոբովիչը տասնյակ տարիների վաստակ և համբավ է վախելած, թե՛ Ռումինիայում և թե՛ Եվրոպայում, իրրե մեծ վիրաբույժ և գիտնական։ Ունի բազմաթիվ գիտական արժեք ներկայացնող աշխատություններ, որոնք գնահատվում են և այսօր։ Իր գրչին է պատկանում վիրաբուժության նվիրված երեք հատորանոց մեծածավալ մի աշխատություն։

Հանգուցյալը ուսմանական կառավարության կողմից վերջերս պարգևատրվել էր աշխատանքի առաջին կարգի շքանշանով։

Պրոֆ.-դոկտ. Հ. Յակոբովիչը իր կյանքով և իր գործունեությամբ պատիվ է բերել Ռումինիայի հայ ժողովուրդին։

ՄԱՀ ՏԻՐԱՄԱՅՐ ՄԱՐԻԱՄ ՎԱՐԺԱՄԵՏՅԱՆԻ

Նոյեմբերի 15-ին, կիրակի առավոտ, Լուսնեջուրի իր բնակարանում, 81 տարեկան հասակում վախճանվել է բազմավաստակ կրթական մշակ և դաստիարակ-մանկավարժ Տիրամայր Մարիամ Վարժապետյանը։

Հանգուցյալը եղել է Այնթապի հայության մեջ հայ իգական սեռի հայեցի և քրիստոնեական դաստիարակության նվիրված պայծառ և ժրջան կրթական մշակներից մեկը։ Տերը նրա փոքր մարմնի կանթիղի մեջ վառել էր կրթության, լուսավորության, հայ նոր

սերնդի դաստիարակության նվիրված խանդավառ և անխնայ ուսուցչուհու մեծ սիրտը։ Նա ավելի քան 50 տարիներ 1896—1946 թվականներին Այնթապում, ապա Կիլիկյան մի շարք քաղաքներում և հուսկ ուրեմն Հալեպում աննահանջ սիրով և անձնվիրությամբ աշխատել է մանկավարժական ասպարեզում, կրթել և դաստիարակել սերունդներ։

Հազարների է հասնում թիվը նրա աշակերտների, որոնք այժմ ընտանիքներ կազմած և երեսանների տեր՝ խորունկ հրախտա-

դիտությամբ և ջերմությամբ ևն հիշում իրենց երբեմնի սիրելի «Մարիամ վարժուհուն», որի ծնկների առաջ կրթվել ևն և դաստիարակվել:

Տիրամայր Մարիամ վարժապետյանը (Բուռնասուգյան) ծնվել է 1878 թվականին Ալեքսանդր (Կիրիկիա), նախնական կրթությունը ստացել է ծննդավայրի Հայկանուշյան վարժարանում, իսկ մանկավարժական բարձրագույն դաստիարակությունը՝ Կոստանդնուպոլսում, հանրաժանոթ դպրոցասեր Տիկնանց վարժարանում, 1891—1896 թվականներին:

Հանգուցյալի ամուսինը՝ Հակոբ Բուռնասուգյանը, նույնպես եղել է բազմավաստակ

ուսուցիչ-մանկավարժ, նվիրված նորահաս հայ մանկանց դաստիարակության շնորհակալ աշխատանքին: Նրանք երկուսով միասին պահել են անձնական դպրոց և՛ Ալեքսանդր և՛ Հալեպում:

Հանգուցյալը մայրն է գերաշնորհ Տ. Բարգին եպիսկոպոս վարժապետյանի: Տիրամայրը ուներ վերջին մի սրտագին փափագ՝ համբուրել Ս. Էջմիածնի Իջման Ս. Սեղանը, Հայրենի հողը և աչքերը փակել Վեհափառ Հայրապետի օրհնությունը առնելուց հետո:

Խորհուրդ մարդկան, կամքն Աստուծո:

Օրհնյալ լինի բազմավաստակ մանկավարժուհուն՝ Տիրամայր Մարիամ վարժապետյանի բարի հիշատակը:

